եւ համբուրել զաստուածամերձ գարշապարան ոտից քոց. վասն այն ես եւ կարգաւորքս հանդերձ ժողովրդեամբ զփոքր տառապեալ հոտոքս, ընտրեցինք զտէր Յակոբ Յիսուսի[8] զիմ վիքար եւ առաքեցինք գալ առ քոհն սրբութիւնդ եւ հնազանդութիւն ցուցանել զքո բարերարութեանդ. եւ եւս կրկնեալ եւ խոնարհեալ անձամբ հայցեմք զսուրբ բարերարութիւնդ, զի մեզ զքո սուրբ օրհնութիւնդ եւ բարէխնամ ողորմութեամբ եւ աղօթից մի մոռացիս, եւս եւ մի՛ անտես առցես մարմնաւոր ողորմութեամբ, զի եւ մեք միշտ անդադար աղօթող ենք վասն սրբութեանդ եւ երկայնակեաց լիցիս. ամէն: Ողջ լեր:

Թվ. ՌՈԽԲ [1643] յունիսի Ե [5]:

Humilisimus serus sanctitatis vestre

Fra Augustinus Arciepiscopus Naxivanensis.

SOCG, vol. 168, f. 428;

f. 427 լատիներէն թարգմանութիւնը

5. Աւգուստին Բաջեցին Ուրբանոս VIII պապին

[1646, ապրիլի 1, Վաղարշապատ]

Է

Ծայրագունի եւ սրբագունի հորդ, եւ փոխանորդիդ Քրիստոսի, հոմանուանեալ սրբոյն Պետրոսի, յամենայն ազգաց եւ աշխարհակալաց համայնից տիեցերաց ողջոյն:

Հասցէ խոնարհաբար ողոքումն եւ ծանուցումն ի նուաստ որդեկէ ֆրա Օգոստինոս արհեպիսկոպոս Նախջեւանոյ, հանդերձ ուխտի քահանա[յ]իքս ընդ նմին եւ ժողովրդօքս. մի զկնի միոյ տարրացեալ ի հողս երկրպագութեամբ մատուցի սրբագունի հօրդ: Քանզի յոյժ

8 Յակոբ Յիսուսի անձի ու գործունէութեան մասին տե՛ս Մանր ժամանակագրութիւններ, հտ. Ա, Երեւան, 1951,189-193, հմմտ. Carlo Longo. Fr. Giacomo di Gesu OP (1590-1669), provinciale d'Armenia, -AFP, վերջին հատորում՝ տե՛ս հետեւեալ հասցէն www.op.org/curia/storico/afp/longo.html